




ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

ԱԼԵԿՍԱՆԻՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ.
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ.



ՕՐԻ ՀԱՂԻՍՈՒՄԻ ԵՎ ՄԷԼԻ ՔՆՆԵ-
լով պ. Ծատուրեանի բանա-
ստեղծութիւնները, խօսում է
ռուսահայերիս գրական ճաշա-
կի ու հասկացողութեան մա-
սին ևս: Պօլսեցի մեր յարգելի
քննադատը մեր մասին այն
կարծիքն է յայտնում, թէ իբր
մենք բանաստեղծութեան մէջ

միայն միտք ենք որոնում: Բաւական է, որ որեւէ միտք
ոտանաւորով արտայայտուեց, և մեր աչքում բանա-
ստեղծութիւն է: Այսպէս են հասկացել մեզմեր տաճկա-
հայ եղբայրները:

Ուզում են ասել, թէ մենք հայկական Պառնա-
սում բազմեցնում ենք այն ամենքին, որոնք փոքր ինչ
խելք ունին, մտածում են, ու ձեռներին էլ Խորէն

Նար-բէյի «յանգարան»-ը կայ:

Պօլսեցոց այդ կարծիքը թէ իրաւացի է եւ թէ ապիրաւ:

Իրաւացի է, որովհետեւ նրանք իրաւունք ունին դատել մեզ՝ նայելով ամեն շաբաթ ու ամիս մեղնում լոյս տեսնող այն բազմաթիւ ոտանաւորներին, որ մենք հրապարակ ենք հանում իբր բանաստեղծութիւն: Դրանց մեծամասնութեան մէջ լիրաւի միայն միտք կայ, որեւէ խղճուկ միտք, ու լանգ:

Բայց ապիրաւ են, որովհետեւ մենք հեռու ենք բանաստեղծութեան մասին մեզ վերագրուող այդ գուհիկ կարծիքներից:

Այո՛, միտք, գաղափարը մեզ համար էական նշանակութիւն ունի: Բայց բոլորը դա չէ. մենք պահանջում ենք, որ բանաստեղծը փիլիսոփայի պէս մեր գլխի վրայ չներգործէ, այլ գործ ունենայ մեր սրտի հետ, ազնիւ զգացմունքներով վառէ, լցնէ այդ Աստուածայինանօթը, որի դատարկութիւնը մարդուս կեանքին գազանական-անասնական կերպարանք է տալիս: Յետոյ պահանջում ենք, որ գաղափարն ու զգացմունքն արտայայտուին իրենց համապատասխան ձեւով:

Գաղափարը մեր աչքում էական նշանակութիւն ունի. միտք տալ, զգացմունքներ շարժել, գործի հրաւիրել, աւասիկ ինչ բաների վրայ ենք ուշ դարձրել մենք ռուսահայերս: «Արուեստը արուեստի համար» տեսութիւնը մեզ համար մի անհասկանալի, եթէ կուզէք նոյն իսկ ծիծաղելի պահանջ է: Ամեն ինչ, այդպէս և գրականութիւնը, այդպէս եւ նրա բանաստեղծական ճիւղը կեանքի վրայ ազդելու, լսողադիմութեան մը դելու, բարոյապէս բարձրացնելու գործին պիտի ծառայեն:

Սխալ է կարծել, թէ գեղեցիկ դպրութեան մէջ մենք ռուսահայերս այդ ուղղութիւնն ենք ընդունել լոկ արտաքին ազդեցութեան շնորհով: Ուշադրութիւն դարձրէք այն հանգամանքին, որ մեր գրական մշակների մեծամասնութիւնը ժողովրդի սրտիցն է գուրս եկել, ստորին խաւերից, այնտեղից, ուր խաւարն աւելի թանձր է, ուր մարդկանց բաժինը չարչարանքն է

ու տանջանքը: Մեր գրական աշխատաւորները մեծ մասամբ բուն ժողովրդի մէջ ծնած մարդիկ են, որոնք չարչարուել տանջուել են մայր ժողովրդի հետ եւ երբ գործել ասպարէզ են դուրս եկել, աչքի առաջ են ունեցել միայն այդ հէգ ժողովուրդը, աշխատել են թեթեւացնել նրա բեռը, վանել նրա մտքին, ու սրտին տիրող խաւարը:

Հրաշալի է սոխակի երգը, բայց կուշտ մարդկանց համար, կեանքից ու բախտից դոհ երջանիկների համար: Աննման է վարդի սիրով վառուած բլբուլի տաղը, բայց նրանց համար, որոնք երբէք չկամեցան Բոսֆորի գեղածիծաղ փերուժ գրօսնելու ախորժանքը թողնել եւ Վանուժ, Մուշուժ տանջուող ժողովրդի ցաւերը շօշափել եւ նրա իրական երջանկութեան գործին ծառայել: Այդ երգն ու տաղը մեր գրական աշխատաւորի համար չեն: Սա գինուոր է ընկած պտտերազմի դաշտը. նրա հանդէպ կանգնած են խաւարի և սնյուսութեան գոռ բանակը: Այստեղ ռազմական ոգեշունչ երգ է հարկաւոր, որ ցնցէ գինուորի միտքը, սիրտը, արիւնը, ջղերը և մի մարմնացած եռանդ դարձնելով՝ աննահանջ կռուի մղէ:

Ինչո՞ւ համար Պուշկինին թողած, մենք առաջ Լերմոնտովին ենք ուշով ու համակրութեամբ վերաբեւելում. ինչո՞ւ մեր նշանաւոր ազգային բանաստեղծը Գամառ-Քաթիպան ռուսական քնարերգութեան մեծագոյն ներկայացուցիչներին թողած՝ Նեկրասովիցն է թարգմանութիւններ ու նմանողութիւններ տալիս: Ինչո՞ւ մենք անտես ենք անուժ Բէօթէին եւ իրար ետևից թարգմանում Շիլլէրի ողբերգութիւններն ու անյազ կարդում: Պատճառը վերոյիշեալ երեւոյթի մէջն է: Թշուառութեան բաժակը ժողովրդի հետ քամած լինելով՝ մեր գրողները վաղ հասկացան, որ առնուազն անյարմար է

Въ годину горя, ѣ

Красу долинь, небесъ и моря,

И ласки милой воспѣвать...

Փամանակի սահանջը ժողովրդի լաւագոյն որդիներին հրամայում էր

„Иди, не падая душою,
 „Встрѣчая грудью молодою
 „Весь бури жизни трудовой.
 „Буди уснувшихъ въ мглѣ глубокой,
 „Упавшимъ руку подавай,
 „И слово истины высокой
 „Въ толпу, какъ жучь живою бросай.“ ¹⁾

Եւ սկսած Աբովեանից՝ մեր բանաստեղծները ապ-
 րել ու գործել են համաձայն այդ հրամանի: Աւելին
 կասենք, մեր առևտհայրոցս գրականութեան նշանաբանն
 է եղել այդ մարգարէական հրամանը:

Այդ նշանաբանը դրօշակ առած՝ գրել ու գործել
 են մեր սերնդի դաստիարակները՝ Նալբանդեան, Պատ-
 կանեան, Շահագիր, Բաֆֆի:

Իմանալով, թէ ինչ թշուառութիւն է տիրում Ժո-
 ղովրդին, Նալբանդեանը երեսուն տարի առաջ երգում էր-

„Ինչ չէ թող տուած երկաթէ կեանքում

„Խնդալ, վայելել ոսկէ ըոպէներ...

Այդ արգելքը գրուած էր ամենքի քնարքների
 վրայ: Ութնական թուականներին մեր երիտասարդ
 բանաստեղծներից ամենատաղանդաւորն ու ամենաճոյլը՝
 Յ. Յովհաննիսեան մի գեղեցիկ ոտանաւորով ցոյց էր
 տալիս թէ ինչո՞ւ է ու սրտեղից այդ արգելքը՝

„Տես, թշուառութեան հազարայեզու

„Բոցը բորբոքուած, ուզում է զոհեր...

Գործելու, խրախուսելու, քարոզելու, ծառայելու,
 զոհուելու կարիք կայ ներքեւ, ինչպէս ուրեմն մենք,
 Պառնասի որդիքս՝ վայելքի ու խնդութեան անձնա-
 տուր լինինք, ասում է բանաստեղծը:

Ռուսա-հայոցս քնարերգութեան մէջ տիրող նոյն
 նօթի ծագման բացատրութեանն է նուիրուած պ. Ծա-
 տուրեանի յաջողուած ոտանաւորներից մինը՝ „Սիրելի
 ընկեր»

¹⁾ Надсонъ.

- «Ծնուած հէգ երգիչ մի դժբախտ ազգի,
 »Միշտ մռայլ տեսայ երկինքը գլխիս,
 »Ես շատ վաղ ուսայ տանջանքը կեանքի,
 »Վաղ մտերմացաւ վշտի հետ հոգիս:
 »Անմեղ հասակից օրօրոցիս մօտ,
 »Ուր պէտք է սիրտս մեղմ օրօր շոյէր,
 »Ուր պէտք է ժպտար կեանքի առաւօտ,
 »Ես տեսայ միայն սեւ ու մութ օրեր...
 »Տեսայ կատաղի շարութեան մատնուած
 »Անզէն թշուառներ ժանտ դահճի առաջ.
 »Լսեցի անտուն դռնէ-դուռն ընկած
 »Հարազատ ազգի աղերսն ու հառաչ...
 »Այ՛ն, ընկեր իմ, դու մի զարմանար,
 »Որ գարուն չունի էլ մատաղ հոգիս.
 »Արիւն արցունքով ներկուած իմ քնար
 »Ազգիս վշտին է արձագանք տալիս...

II

Եթէ յօդուածիս սկզբում ակնարկուած Պօլսեցի գրագէտը ռուսա-հայոցս քնարերգութեան հետ ծանօթանում է պ. Ծատուրեանի «Բանաստեղծութիւններ» ով, ապա նա իրաւունք ունի կարծելու, թէ մենք բանաստեղծութիւնից միայն միտք, ոտք ու յանգ ենք պահանջում եւ դրանով էլ բաւականանում: Եթէ Ծատուրեանին համեմատենք իրեն ժամանակակից բանաստեղծները՝ Յովհաննէս Յովհաննիսեանի և Յարութիւն Թումանեանի հետ, կտեսնենք, որ դրա ստեղծագործութիւնը բոլորովին տարբեր բնաւորութիւն ունի: Յովհաննիսեանի փոքրիկ գրքովում բազմազան մտքերի, հարուստ բովանդակութեան հետ՝ մենք տեսնում ենք խոր զգացմունքներ. նրա երևակայութիւնը մեծ վարպետութեամբ գողտրիկ պատկերներ է յօրինում և երբեմն էլ այնքան յանդուգն թռիչքներ է գործում որ ձեզ թւում է, թէ առաջներիդ մի խոշոր տաղանդ, մի կորիւն է կանգնած, որ լաւ պայմանների մէջ առիւծ կդառնայ: Նրա ստեղծագործութիւնը քնարերգական

բնաւորութիւն ունի և նա ինքը զտարիւն քնար-
երգակ (ДИРИЖЪ) է:

Թումանեանի ստեղծագործութեան բնաւորու-
թիւնը վիպական է: Ծնած ու ապրած ժողո-
վրդի մէջ, ծանօթ նրա ցաւին ու վշտին, ծանօթ այն
լեռներին, գետերին ու ձորերին. ուր հայրենի ժողո-
վուրդն է անցրել իւր տխուր և ուրախ օրերը, նա հա-
ղորդում է մեզ բնութեան ու կեանքի անմիջական տը-
պաւորութիւնները: Նրա երեւակայութիւնը պարզ, անպա-
ճոյճ պատկերներով մէջ երևան է հանում ժողովրդի կեանքը
և հոգի է տալիս, կենդանացնում է հայրենի բնութիւնը:

Ծառուրեանի ստեղծագործութիւնը վարդապետա-
կան բնաւորութիւն ունի: Գեանքից ու բնութիւնից
ստացած անմիջական տպաւորութիւնները չի երգում
նա. որովհետև այդ տպաւորութիւնները չեն կարողա-
նում մեր բանաստեղծի ստեղծագործութիւնը գրգռել:
Նա այդ տպաւորութիւնները սառն դատողութեան է
ենթարկում և քննում, պատմում ու խօսում են նրանց
մասին: Խոր, ուժեղ զգացմունքի չէք հանդիպում նրա
ոտանաւորների մէջ, ուստի և ընթերցումը ձեզ վրայ
խոր, ուժեղ տպաւորութիւն չի թողնում, խոր և ուժեղ
զգացմունքներ չի առաջացնում: Ապա տեսնում ենք
երեւակայութեան խիստ զգալի աղբատութիւն. մի
փոքր է շատ է յաջողուած պատկեր, մի համեստ թուիչք
մենք չենք տեսնում ամբողջ գրքի մէջ:

Բնութեան հրաշալի տեսարանի առջև է կանգ-
նած արդեօք հեղինակը, թէ՛ «գեղեցիկ աչքերի» ու «վարդ
շրթունք»-ի, ազգային գործչի պատուին կազմուած փա-
ռաւոր հանդէսն է տեսնում, թէ՛ Տիգրիսների ու Եփ-
րատների ափուկքներից հասնող աղբրան ու հառաչը,
ամեն տեղ, ամեն ժամանակ նա ձեզ տեղեկութիւններ
է տալիս իւր տեսածի մասին, պատմում է, խօսում է,
ճառում զրուցում: Այդ է ահա պատճառը, որ ընթեր-
թողի սիրտն անտարբեր է մնում, չի բորբոքում, չի
եռում, նոյն իսկ չի յուզում ուրախ կամ տխուր յոյ-
զերով:

Իմ միտքն ապացուցանելու համար՝ ես կվերցնեմ

պ. Ծատուրեանի ոտանաւորներէց մէկը և կքննեմ: Ես վերցնում եմ «Արշալոյսը ծովի վրայ» ոտանաւորը: Դա պատկանում է գրքի մէջ ամփոփուած ոտանաւորների մի ընդարձակ շարքի, որ կրում է «Խրիմի ալբոմից» վերնագիրը: Այս վերնագիրն արգէն ցոյց է տալիս, որ հեղինակն «Արշալոյսը ծովի վրայ» ոտանաւորը բնութեան ամենահրաշալի տեսարանի անմիջական ազդեցութեան ներքոյ է գրել: Նա եղել է Խրիմում, յաճախ ծովափ է դուրս եկել, տեսել է արշալոյսը և հիացել է նրանով: Եւ այդ հիացքն արտայայտել է ակնարկուած ոտանաւորով, ու ոտանաւորը նուիրել է մեր շնորհալի նկարիչ Վարդգէս Սուրէնեանցին:

Այս մանրամասնութիւններն ես հաղորդում եմ այն պատճառով, որ իմ ընթերցողը չկարճէ, թէ ես դիտմամբ անյաջող ոտանաւոր եմ ընտրել: Ա՛յ. իմ լիշաճ հանգամանքները ցոյց են տալիս, որ «Արշալոյսը ծովի վրայ» ոտանաւորը հեղինակի առանձին ուշքին ու խնամքին արժանացած ոտանաւորներից մէկն է: Այժմ կարգանք ոտանաւորը.

«Ուզում ես դու տեսնել վսեմ բնութեան
«Մի հրաշքը—անպատմելի՛ մի պատկեր,
«Որից դիւթուած, անշարժ, որպէս լուռ արձան
«Որին յառած իւր հիացքով լի աչքեր,
«Նայե՛ս տալած, նայե՛ս անվերջ ու անյագ—
«Դ՛ռւրս եկ ծովափ արշալոյսի ժամանակ:

«Ուզում ես դու ողջ էութեամբ նորոգուած,
«Ամենայն ինչ, ողջ երկրայինն մոռանալ,
«Մաքով ազատ, կեանքի լուծը թօթափած,
«Անուրջների պայծառ աշխարհ վերանալ,
«Գրկել հոգով տիեզերքը բովանդակ
«Դ՛ռւրս եկ ծովափ արշալոյսի ժամանակ:

«Օ՛, այդ ժամին դու կտեսնես, դու կզգաս
«Անյաղթ ոյժը, անհաս փառքը Արարչի—
«Ո՛վ է եւ մեծ, եւ երկրի տէրն հանապազ,
«Եւ ո՛ւմ պէտք է մարդս կեանքում ճանաչի:

Արշալոյսը բնութեան ամենահրաշալի տեսարանն է: Մենք, հասարակ մահկանացուներս կանգնում ենք

այդ պատկերի առջև և մեր ձեռքերը տարածելով մի երկար «ուխայ» ենք կանչում: Այդ «ուխայ»ը, մեր տարածած ձեռները, մեր պլշած աչքերը, մեր դէմքին նկարուած հիացքի հետ՝ մի բանաստեղծութիւն է, բայց շատ աղքատ, թոյլ բանաստեղծութիւն: Պատճառն այն է, որ մենք ստեղծելու շնորհք չունինք: Եւ եթէ ծովափից, արշալոյսի տեսարանը թողնելուց լետոյ տուն վերադառնանք ու մեր բարեկամներին կարդանք մեր յօրինած բանաստեղծութիւնը, այսինքն ձեռներս տարածենք, աշխատենք, որ դէմքերնիս վրայ հիացքի պատկեր կազմուի, ու «ուխայ» բացականչենք, հաւատացէք, դրանով ոչ ոքի ոչինչ չենք հասկացնիլ: Կարող ենք, նոյն իսկ բացատրութիւններ աւելացնել, ասել, որ արշալոյսը գեղեցիկ, հրաշալի, սքանչելի, անպատմելի է, բայց դարձեալ ոչ ոքի սիրտ չենք շարժիլ:

Իսկական բանաստեղծը արշալոյսի մասին այնպէս կգրէ, որ ընթերցողն իրեն բնութեան այդ սքանչելի տեսարանի առջև զգայ. անզգայաբար նրա բերանից «ուխայ» դուրս թռչի, ձեռները տարածուին, դէմքին հիացք նկատուի և սիրտը լցուի խորին ստորոգութեամբ դէպի գրական ու բնական արշալոյսների արարիչները:

Այսպէս չէ վարում պ. Ծատուրեանը. նրա ստեղծական կարողութիւնը քնած է: Փոխանակ պատկերներ տալու և ընթերցողի մէջ իւր կրած զգացմունքները գրգռելու, նա ասում է. «եթէ ուղում էք հիանալ, ապշել, երկրալինը մոռանալ, անուրջների աշխարհը վերանալ, դուրս եկէք ծովափ արշալոյսի ժամանակ: Խոստովանենք, սր սա էլ մեր հասարակ մահկանացուներիս բանաստեղծութիւնից ոչնչով չի տարբերում. գոնէ չի տարբերում իւր թողած ազդեցութեամբը:

Միակողմանի չնկատուելու համար ես ընտրում եմ՝ դարձեալ մի ոտանաւոր: Եւ մեծ խնամքով ընտրում եմ այնպիսին, ուր նիւթն արդէն սրտի թելեր է շարժում: Բոլոր բանաստեղծների համար մայրական գիրկը քաղցր լեռնալեռների աղբիւր է եղել, և մայր բառը քնքոյզ զգացմունքներ է զարթեցրել: Պ. Ծա.

տուրեանն այդ նիւթին մի ոտանաւոր էլ իւր «բանաստեղծութիւնների» Ա. հատորումն էր նուիրել, եթէ յիշողութիւնս ինձ չէ դաւաճանում: Այս քննութեան ենթարկուած գրքումն էլ կայ այդպիսի մի ոտանաւոր՝ «Մայր»: Այդ ոտանաւորով հեղինակը մեզ իւր կեանքի մասին շատ բան է յայտնում: «Մատաղ կրծքումս ծաղիկ մանկութեան շատ յիշատակները կան, սլատմում է նա. որոնք կեանքի փոթորկում ինձ խաղաղ ըզուցեցեր են պարզեւում. միայն, ո՛վ գիտէ, գուցէ ժամանակը մի օր իւր հետ տանէ այդ յիշատակները:

- «Բայց այն օրերը, այն նուիրական
- «Յիշատակները մանկական կեանքիս,
- «Երբ մօրս գրկում առատ, անսահման
- «Սէր էր վայելում անարատ հոգիս,
- «Այն օրերն, օ՛ մայր, որպէս սրբութիւն,
- «Անջինջ կպահուին սրտիս խորանում,
- «Անջինջ կպահուի և քո սուրբ անուն
- «Իմ վառ շրթունքին, իմ ջերմ երգերում.
- «Եւ ինձ կեանք տուող քո սէրը, մայր իմ,
- «Սրտիս հետ միայն կմտնի շիրիմ...

Մի շատ քնքոյշ և մեր հեղինակի համար առանձնապէս սիրելի նիւթ. բայց որքան սառն, որքան բանախօսական (պրօզայական) արտայայտութիւն: Ոտանաւորի ամեն մի բառը, ամեն մի նախադասութիւնը դուրս է գալիս բանաստեղծի գլխից, սիրտը քնած է ամենախոր քնով և ոչ մի կերպով կենդանութեան նշան չի ցոյց տալիս: Դա իսկապէս ինքնակենսագրութիւն է, բայց բանաստեղծութիւն՝ երբէք: Հեղինակը ժամերով մտածել է և հաղորդում է մեզ, թէ ինչ է մտածել: Ել ուրիշ ոչինչ:

III.

Սիրոյ երգերը պ. Ծատուրեանի գրքոյկում ընդարձակ տեղ են բռնում: Դրանք էլ մեծ մասամբ հեղինակի գլխիցն են ծագում, սիրտը փոքր մասնակցութիւն ունի: Այն, այդ երգերի մէջ կայ թոյլ, շատ թոյլ

զգացմունք: Սէր ու սրտի փոքր մասնակցութիւն. հա, քննչ անէք. այդպէս է մեր բանաստեղծի տեմպերամէնտը: Այդ թոյլ զգացմունքը սակայն միանալով հետաքրքիր բովանդակութեան և յաջող ոտանաւորի հետ՝ ուշագրողութեան արժանի են դարձնում պ. Ծատուրեանի քնարը:

Սէր... որ բանաստեղծը չէ իւր քնարը լարել այդ նիւթի համար. ո՞վ, որ մի քանի ոտանաւորներ է հիւսել, չէ երգել սէրը: Քնարերգութեան յաւիտենական նիւթն է դա և զլիսաւոր մօտիւր: Բայց ս'ը էլ կայ, սէր էլ: Կայ հեթանոսական սէր, կայ և քրիստոնէական սէր:

Երբ կնոջը մենք սիրում ենք նրա համար, որ կին է, մի էգ, երբ մեր մէջ սէր են գրգռում նրա աչքերը, ունքերը, հասակը, մի խօսքով արտաքինը, այլապէս ասենք, երբ մենք պաշտամունքի աւարկայ ենք դարձնում կնոջ մարմինը, լէշը, այդ ժամանակ մեր սէրը հեթանոսական սէր է, անասնական կոյր կիրք է: Բանաստեղծների մեծամասնութիւնը հէնց այդ սէրն է երգում: Ահա մի օրինակ այդ տեսակ բանաստեղծութիւնից, որ ես արձակ թարգմանում եմ.

«Վայելքի խելացի ծարաւը լոկ այնպիսի ծաղիկներ է որոնում, որոնց գեղեցկութիւնը դեռ կոկոնի մէջ է թագնուած և այնպիսի բերան, որից չէ բուրում օտարի համբոյր: Ես դրանից աւելի հրապուրելի մի բան եմ գտել. մի մանուկ թագաւորի հոգու և նրա քաղցր ձգտումների համար. մի մանուկ, որի զուարթութիւնը երկնքի աստղերին ամաչեցնում և արևը մթագնում է. վարդին զրկում է հրաշալի կերտուածքից և ոշուշանից խլում է նրա մարգարիտները: Առաւօտեան արշալոյսի գեղն ու ծիրանին կթառաւորին նրա այտերի կարմրի հանդէպ. նոսրերի արիւն հիւթը կդժգունի նրա շրթունքի առջև. նրա ոշունչն աւելի անուշաբոյր է քան մուսկուսը: Կարճ, այդ մի աստուածուհի է, երկնային գեղեցկութեան թագաւորութիւն, և զուարճութեան

դրախտ. հրեշտակ, որի ցնորքների մէջ ցանկու-
 թիւնն է թագնուած, աչքերի մէջ վճռականու-
 թիւնը և սրտի մէջ հեշտանքը: Նրա շրթունք-
 ները հոգին լցնում են ամենահամիղ նեկտարով
 և մեղրով: Իմ մէջ էլ բորբոքուեց ամենառողջ
 ցանկութեան կրակը, երբ երկու անգամ տեսայ
 նրան լոգարանում... Նրա շրթների ծիրանին
 հրաշալի կերպով բոցավառում էր ջրի բերեղ ա-
 լիքները. նրա կրծքից մարգարիտներ էին հոսում,
 աչքերում փայլում էր կիրքը: Երբ մարմարեայ
 աւազանից նա գլուխը բարձրացրեց, ինձ թուաց,
 թէ արեգակն է ծովերի աստուածների կերպա-
 նրանքով *):

Այս հեթանոսական սէր է, որ ո՛չ միայն արժանի
 է մարդկային արժանապատուութեան, այլ և սոսկալի
 կերպով ստորացնում է մարդուն և անասունների աշ-
 խարհը գցում:

Ուրիշ է քրիստոնէական սէրը. այստեղ բանաստեղ-
 ծը կնոջ մէջ մարդ է որոնում, մարդուն է տեսնում
 և մարդկայինն է սիրում: Ու երգում է ներքին գե-
 ղեցկութիւնները, սրտի անմեղութիւնը, զգացմունքնե-
 րի սրբութիւնն ու ջերմութիւնը, ձգտումների ազնու-
 թիւնը... Ուզում էք օրինակ. ահաւասիկ մի հատուած
 Նադսոնից, որ ես դարձեալ արձակ եմ թարգմանում.

«Եւ ասացի քեզ. իմ քոյրը եղիր: Եղիր իմ
 հոգը, խինդն ու ընկերը: Քեզ հետ նոյն բանն ենք
 օրրանից սիրել. նոյն սրբութեանն ենք քեզ հետ
 աղօթել: Օ՛ն, երթանք միասին դէպի ճաճան-
 չափալ նսլատակ, միասին մարդալի աշխար-
 հում՝ որպէս խուլ անապատում»:

Այս տեսակ ազնիւ ու բարձր տրամադրութեան
 բանաստեղծն էլ երգում է կնոջ աչքերը, արտաքինը,
 բայց միայն դրանց մէջ դնում է ներքին գեղեցկու-
 թեանց արտացոլումը: Ահա դարձեալ մի հատուած նոյն
 Նադսոնից.

*) Լօգենչտէյն.

«Ի՞նչ ասին օրուանից կրկնակի թանգ ես ինձ
 «Համար, երբ վշտով, խոկմունքով վառուեց հայ-
 «եացքդ. գեղեցիկ ձգտմանց սրբարանի մէջ, ին-
 «քբըդ էլ աւելի ես գեղեցիկ ու սուրբ...»

Այս սէրն է ահա, որ մարդուն անասուններից բար-
 ձրացնում է և աստուածանման մարդ է դարձնում. դա
 է, որ մարդուն ազատում է վայրենութիւնից, հեթա-
 նոսական աշխարհայեացքից և քրիստոնէութեան մա-
 քուր երկնակամարի տակ է կանգնեցնում, ստեղծում
 է քրիստոնեայ մարդ, որի սակաւթիւ բարոյական
 պատուէրներից մէկն է՝ «մի շնար», և որի համար ար-
 դէն շնութիւն է, երբ «հայի ի կին մարդ առ ի ցան-
 կանալոյ նմա»:

Այդ սիրոյ համար է առաքեալն ասում. «Սէր եր-
 կայնամիտ է, քաղցրանայ. սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամ-
 քարհաւածէ, ո՛չ հպարտանայ: Ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ
 զիր, ո՛չ գրգռի, ո՛չ խորհի զչար: Ո՛չ խնդայ ընդ անի-
 բաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն: Ամենայնի
 աւել, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամե-
 նայնի համբերէ»:

Պ. Ծատուրեանը խառն ու շփոթ երգում է թէ
 հեթանոսական և թէ քրիստոնէական սէր, նա երգում
 է թէ անասնական կիրք և թէ մարդկային սիրոյ ազ-
 նիւ զգացմունք: Սակայն շեշտուածը, գլխաւոր տեղ
 բռնողը առաջինն է, հեթանոսական սէրը: Թէ մեր հե-
 ղինակը որքան է գրաւուած սիրոյ նիւթական կողմով, թէ
 որպիսի մոլեռանդութեամբ պաշտամունքի առարկայ է
 դարձնում կնոջ արտաքինը, մարմինը, ոչինչ չպահան-
 ջելով նրա սրտից ու մտքից, երևում է հետևեալ ոտա-
 նաւորից:

Գեղեցիկ աչեր, սևորակ աչեր,
 Որ սիրած կուսիս նագելի դէմքին
 Ծողում էք, որպէս վառվռուն աստղեր,
 Իուք կախարդեցիք իմ ազատ հոգին...
 Եւ ահա, որպէս ձեր հլու գերին,
 Ես ձեզ եմ, աչեր, երգում ու գովում,

Ա՛խ, եթէ և ձեր հպարտ տիրուհին
Երգս փայփայէր իւր մատաղ կրծքում...

Տեսէք, հեղինակի հոգին կախարդուել է, նա հլու
գերի է դառել «սևորակ աչերին», և այդքան ստորա-
նում է երգիչը դեռ չիմանալով, թէ երբ և իցէ այդ
աչերի հպարտ տիրուհին կարող է համակրել իւր երգը,
այսինքն իւր մտքերն ու զգացմունքները: Ասացէք,
խնդրեմ, ինչո՞վ է տարբերում այս երկրպագութիւնը
Դալայ-Լամայի առջև երեսիվայր ընկած կռապաշտներէ
երկրպագութիւնից...

Մի տեղ հեղինակը յայտնում է, որ
«առանց սիրոյ սրտի համար չկայ կեանք».
և յայտնում է, որ խօսքը «արիս» սիրոյն է վե-
րաբերում (ինձ ասում են):

«Դ՛մ օրագրից» ստանաւորի մէջ բանաստեղծը ամ-
բողջ սիրտը ետրին է տալիս:

- » Զունեմ ես գանձ, ահ, մարգարիտ.
- » Քեզ պարգևեմ, նազելիս.
- » Գանձս սիրտ է, անկեղծ մի սիրտ,
- » Եւ այդ սիրտն եմ քեզ տալիս՝:

Մի ուրիշ տեղ արդէն նա իւր ետրի սէրը հերո-
սութեան ազրիւր, գործունէութեան խթան է համարում.

- » Քո վարդ-շրթունքից ջերմ համբոյր քաղած,
- » Սիրտս ալեկոծ ոսկի յոյսերով, (°),
- » Ահա, իմ հոգեակ, զուարթ, կրծքաբաց.
- » Նորից նետում եմ ես ինձ կեանքի ծով:
- » Թող գոռ ալիքներ շուրջս փրփրաւան,
- » Անյաղթելի՛ է իմ սիրող հոգին.
- » Միայն այդ ծովում, փարոսի նման,
- » Դու լուսաւորիք իմ մթին ուղին...

Երջանիկ միամտութիւն, որ հաւատացած է, թէ
կեանքի գոռ ալիքների դէմ կռուելու համար բաւական
է վարդ շրթունքից քաղած մի ջերմ համբոյր... կեան-
քըն ու մարդ արարածի հոգեբանութիւնը մեզ բոլորո-
վին ուրիշ բան են ասում: Դրանք շատ յամառ կերպով

պնդում են, որ այդ ջերմ համբույրները ոչ թէ մարդուն հերոս ու առաքինի չեն դարձնում, այլ թուլութեան ու մեղկութեան են դատապարտում: Մեր բանաստեղծներն այդ ճշմարտութիւնը սովորելու համար պէտք է ժողովրդի հանճարի մօտ աշակերտելու զնան: Հետաքրքիր է, որ ժողովրդական հին հեքեայթներում, մանաւանդ դիւցազնական վէպերում հերոսը քաջութիւններ է գործում, զօրեղ թշնամիների դէմ կռուում ու յաղթում, հայրենի երկիրն ազատ ու խաղաղ կեանք է պարգեւում այն ժամանակ, երբ դեռ «եար» չէ ճանաչում: Նա իւր դիւցազնական պարտքը կատարելուց յետոյ է միայն ամուսնանում: Եւ ջերմ համբույրների այդ շրջանում մեռնում, ոչնչանում է նախկին առաքինի հերոսը և նրանից միայն մի թուլամորթ արարած է մնում»:

«Առանց սիրոյ սրտի համար չկայ կեանք», այդ ճիշտ է, բայց միայն առանց ճշմարտութեան սիրոյ, առանց հայրենիքի սիրոյ, առանց իդէալի սիրոյ: Միթէ կեանք չէր Պօղոս առաքեալի կեանքը, միթէ կեանք չէր Եօպէնհառուէրի կեանքը, որոնց համար «եար» ասած բանը գոյութիւն չունէր: Կեանք չէր միթէ Ջիորդանօ Բրունօյի կեանքը, որ յաւիտենական ճշմարտութեան ձգտելով՝ անասելի տանջանքների ենթարկուեցաւ և դեռ այդ տանջանքների մէջ էլ միշտ իրեն երջանիկ զգաց .. Ո՛չ, դա է իսկական կեանքը, դա է աստուածային նմանութիւն ունեցող մարդուն արժանի միակ կեանքը:

Պէտք է ասեմ, որ այս ճշմարտութիւնը պ. Ծատուրեանն էլ հասկանում է: Իւրիչ Վեսելովսկուն նուիրած մի ոտանաւորում նա «կեանքի յարատե կռուում մարտնչելու» համար կարևոր է համարում ոչ թէ վարդ շրթունքից քաղած համբոյրը, գործունէութեան համար «ոյժ ու նեցուկ» ոչ թէ եարի սէրն է ճանաչում (Բարի հրեշտակ), այլ լոյսի սէրը:

Օրեր են գալիս և օրեր գնում,

Անվերջ են մարդկանց ցաւերն ու հոգսեր.

Եւ նա է կեանքի յարատե կռուում

Մարտնչում որպէս զինուոր անվեհեր,

Ով լոյսի սիրով սիրաբը բորբոքած,
Ուխտել է լինել մշակ աշխարհի.
Ապրել-վեհ գործի հերոս անձնուրաց
Մեռնել-մարտիրոս վեհ գաղափարի ..

Այո՛, այդ սէրն է, որ մարդուն առաքինացնում,
հերոս է դարձնում, կեանքի կուռի մէջ է նետում,
Գողգոթայի ճանապարհին դնում. լոյսի, ճշմարտու-
թեան, իդէալի սէրը: Այս սէրն է, և միայն այս սէրը,
որ ոյժ է տալիս մարդուն իւր խաչը անտրտունջ տա-
նելու: Եւ պ. Ծատուրեանը չարաչար մոլորուում է, երբ
կեանքին դիմելով, ասում է.

«Ծանր չէ քո խաչն, երբ մենք կորացած
»Այդ խաչի տակին՝ խուլ հառաչելիս,
»Ունենք մտերիմ, որ մեզ համագրաց,
»Մեզ հետ խնդում է և մեզ հետ լալիս...

»Եւ որպէս անյագ, որպէս համարձակ
»Յառնջ, միշտ լառնջ ձգտում է հոգին,
»Երբ կեանքում, որպէս յուսատու հրեշտակ,
»Ընկերն ընկերին սեղմում է կրծքին:

»Այնտեղ մտերմի սիրառատ գրկում
»Եւ փուշն է ծաղիկ, և լացը ծիծաղ.
»Այնտեղ ձմեռն է գարնան պէս ժպտում,
»Այնտեղ և մահուան համբուրն է խաղաղ.

Սկզբից մինչև վերջ մոլորութիւն. հոգին անյագ
ու համարձակ միշտ առաջ է ձգտում, երբ լցուած է
դէպ իդէալը հաւատով, յոյսով և սիրով, մանաւանդ
սիրով. կեանքի մէջ բանական մարդու յուսատու հրեշ-
տակը միայն իդէալը կարող է լինել. Եւ ողորմելի
միայն պիտի կոչել այն մարդուն, որ «սիրառատ գըր-
կերում թաւալելով, հաւատում է, թէ մեծամեծ թը-
ռիչքներ է գործում: Կեանքի փոթորկի տանջանքների
մէջ մարդուս ընկերը միայն իւր մէջն է: Եւ եթէ նրա
ներքինը դատարկ է, եթէ նրա հոգին զուրկ է իդէալի
հաւատից, յոյսից ու սէրից, ապա թշուառ է այդ մար-
դը, նման «գերեզմանաց բռելոց»: Սևորակ աչերը, որ
միայն աչերի համար են սիրում, վարդ շրթունքն ու

սիրառատ գերկը, որ հէնց միայն իբրև շրթունք ու գերկ էլ պաշտուում են, այդ գերեզմանի ներքին փթու-թեանը միայն սնունդ տալու կարողութիւն ունին:

Երբ Յիսուսն իւր աշակերտներին պատուիրում էր, թէ՛ «Գնացէք, աշակերտացէք զամենայն հեթա-նոսս», իբր մի քանի Գալիլիացի ձկնորսների աշխարհի ահեղ զօրութեանց դէմ կռուի էր ուղարկում՝ վստահ յաղթութեան, նա ի նկատի ունէր ո՛չ թէ նրանց «ըն-կերները», այլ ներքինը, հոգին, որ վառուած էր սի-րով. համարիտ է, վերջն էլ աւելացրեց, թէ «ես ընդ ձեզ եմ», բայց չէ որ այդ «ես»ն էլ անմարմին սէր էր: Եւ պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, թէ այդ սիրով զինուած հոգին ինչ հրաշքներ, ինչ զարմանա-լի յաղթութիւններ է տարել...

IV

Պ. Ծատուրեանի երգերի մէջ աւելի արժէք ու-նին նրանք, որոնց բովանդակութիւնը կազմում են հա-սարակական մօտիւններ: Այդ շարքում կան մի քանի բա-ւական յաջողուած ոտանաւորներ: Դրանց մէջ ոյժ կայ և կարգացում են սիրով:

Այդ ոտանաւորներն ընդհանրապէս մեր առջև մի ախուր ֆօն են նկարում.

Դձուքն է մեր կեանքը, տխուր մեր օրեր,

Ձկայ մեզ հանգիստ, չկայ խնդութիւն.

Միայն տառապանք և անվերջ վշտեր

Մեր հեզ սրտերից քամում են արիւն...

Նայում ենք վերեւ-ամպամած երկինք,

Նայում ենք ներքև-շիրիմ ոտքի տակ

Նայում ենք մեր շուրջ-ահեղ փոթորիկ...

Դրութիւնն աւելի յաջող և ազգու կերպով արտա-յայտում է «Երկու փոթորիկ» ոտանաւորը: Սա պ. Ծա-տուրեանի սակաւաթիւ շատ յաջողուած երգերից մէկն է և դրա ընթերցումը լիրաւի ընթերցողի վրայ տպա-ւորութիւն է թողնում: Ուստի և ես կարևոր եմ հա-մարում առաջ բերել ամբողջ ոտանաւորը:

Այս չարագուշակ, ահաւոր ժամում,
 Երբ ծովն ալեկոծ քար քարին տալով,
 Խուլ, զժոխային ձայներ է հանում
 Եւ ափեր լիզում սպիտակ փրփուրով.
 Եւ հսկայական լեռների նման
 Մերթ բարձրանում են վայրագ ալիքներ,
 Եւ մերթ խորտակում ու ծովի վերան
 Բացում ահռելի, խաւար անդունդներ,
 Ես նստած ափին, պղտոր հայեացքով
 Ահեղ տարերքի խաղին եմ նայում.
 Նայում եւ տանջուած, վշտայուղ մտքով
 Հեռուն դէպի միւս եզերք սլանում.
 Եւ այնտեղ ահա մի սլլ արհաւիրք,
 Սոսկալի մի խաղ անողոք կեանքի.
 Այնտեղ տեսնում եմ արեան փոթորիկ,
 Նահատակութիւն մի ամբողջ ազգի:
 Եւ այնտեղ արիւն-արցունքի ծովում,
 Որպէս լեռնացած այս սև ալիքներ,
 Իրար են դիզում փլատակներում
 Կիսամեռ զոհեր, անթանգ դիակներ...
 Եւ մտածում եմ—ծովի փոթորիկին
 Եռու կյաջորդէ արև փափազած,
 Բայց սխ, ո՞վ գիտէ, այն քամբախտ ազգին,
 Փոթորկից յետոյ քնչ է վիճակուած...

Նոյն դրութիւնը դարձեալ յաջող եւ ազգու կեր-
 պով պատկերացել է „Գու անվիշտ...“ եւ „1897 թ.“
 ոտանաւորներում: Սակայն խաւարն ու չարիքը որքան
 էլ ծանր, մեր հեղինակը չի յուսահատեցնում իւր ըն-
 թերցողին: Թէև գալիս են սրտմաշուկ ընկերներ, որ
 մարդ յուսահատ հարց է տալիս, թէ

Մթթէ վերջ արդէն մեր նուիրական
 Բոլոր յոյսերին ու երազներին,
 Որ միշտ յուսավառ աստղերի նման
 Մեզ շողում էին կեանքի գիշերին...

Սակայն հեղինակը հաւատում է, որ վերջ ի վեր-
 ջոյ համաձայն բնութեան օրէնքի գարունը կգայ... եւ

այս հաւատը կարմիր թելի պէս ընկած է նրա ամբողջ գրքի մէջ:

Պ. Ծառուրեանն իւր օգտին շատ բան արած կը լինէր, եթէ այդպէս յաջողուած երգերի շարքում չթողնէր այնպիսի թող ու անպէտք իրեր, ինչպէս են «Քեզ համար էիմ տանջանքը», կամ «Տո՛ւր ձեռքդ, ընկեր»: ¹⁾ Անյաջող կամ առօրէական չնչին հաշիւների ու կոյր կրքերի նուիրուած ռաանաւորները թուլացնում են ընդհանուրի տպաւորութիւնը:

V

Թուում է, թէ կարողացայ պ. Ծառուրեանի երգի մասին մի մտաւոր գաղափար տալ իմ ընթերցողին: Եթէ այդպէս է, ապա ուրեմն ես հասել եմ իմ նպատակին: Այժմ ցանկանում եմ մի երկու խօսք նուիրել պ. Ծառուրեանի թարգմանութիւններին, որոնք գրքի գրեթէ կէսն են բռնում:

Թարգմանիչը պարտաւոր է տալ իւր ընթերցողին այն, ինչ որ կտար հեղինակը, եթէ ընթերցողի լեզուով լինէր մտածում, զգում և գրում: Եթէ հայ թարգմանիչը կամենում է Եւլիից մի բան թարգմանել, նա պէտք է մտածէ, թէ ինչպէս կասէր ինքը Եւլիին վերցրած խօսքը, եթէ հայ լինէր: Ասում եմ, եթէ հայ լինէր և ոչ եթէ հայերէն իմանար: Կարելի է շատ գեղեցիկ կերպով իմանալ հայերէն, բայց այդ դեռ քիչ է. պէտք է գիտենալ եւ մտածել հայերէն: Բանաստեղծական թարգմանութիւնների ժամին մանաւանդ շատ քիչ է միայն երկու լեզուն իմանալ: Ոչ ոք չէ կարող Եւլի թարգմանել, որքան էլ հմուտ լինի անգլերէն ու հայերէն լեզուներին, եթէ նա չէ կարողացել Եւլիի երգած մտքերի ու զգացմունքների աշխարհը մտնել և այդ աշխարհի մթնոլորտով ապրել: Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը «թագուհի ամե-

¹⁾ Վերջին ռաանաւորի նիւթը վերցրած է մեր տղայամիտ հրապարակախօսութիւնից, որ ինչպէս յայտնի է, ընթանում է Վելիկոների ու Սուվորինների գարշապարները լիզելով ու ծամածը յետ ծամելով..

նայն թարգմանութեանց, է կոչուում. գործի այդքան նշանաւոր յաջողութեան պատճառը միայն նա չէ, որ մեր թարգմանիչները նշանաւոր լեզուագէտներ էին, այլ գլխաւորապէս նա, որ նրանք՝ մեր երջանկայիշատակ թարգմանիչները առաքեալների հաւատը և ընդհանրապէս, նրանց հոգին ունէին: Այս ներքին տրամադրութիւնը թարգմանչի համար էական պայման է:

Սակայն որովհետև այդ ներքին տրամադրութիւնը չի շինուում, այլ գոյանում է ռեֆլեկտիւ կերպով, ինչպէս առհասարակ գոյանում են բնութեան և կեանքի երևոյթների տպաւորութիւնները, ուստի նշանաւոր բանաստեղծները թարգմանական գործին գլուխ չեն դրնում: Նրանք թարգմանում են օտար բանաստեղծին այն ժամանակ, երբ դրա որևէ երգից ուժեղ տպաւորութիւն են ստանում, երբ նրանք երգի կամ և ուրիշ ֆակտորների-ազդեցութեան ներքոյ հոգեկան այն վիճակի մէջ են ընկնում, որում եղել է օտար բանաստեղծն այդ երգը յօրինելիս:

Այս հայեացքից արդէն հասկանալի է դառնում, որ բանաստեղծին կարելի է թարգմանել միայն ընագրից, միայն այն լեզուից, որով գրել է բանաստեղծը: (Ձրպէտք է մոռանալ, որ մեր խօսքը վերաբերում է մեծ բանաստեղծներին) Իսկ երբ թարգմանութիւնից են թարգմանում, այդ ժամանակ կորչում է թարգմանելի երկի համն էլ, հոտն էլ, ոյժն էլ: Այսպէս է վարուել պ. Ծատուրեանը, թարգմանելով բաւականին երգեր Բալուրնից, Վիկտոր Հիւգօյից, Հէյնէից, Լօնգֆելդից և այլն:

Այս դէպքում քննադատութիւնը որքան էլ զիջող ուզենայ լինել, բայց մի սահման կայ, որից դէնը չի կարող անցնել: Հօ պէտք է վերջապէս պահանջել, որ զոնէ մտքի հարազատութիւնը, ճշտութիւնը պահպանուի: Սակայն պ. Ծատուրեանն այս հասարակ պահանջըն էլ չի ուզում ճանաչել: Թերևս առարկեն, թէ մեր աշխարհիկ լեզուն զեռ այնքան մանուկ է, այնքան անկատար, որ Բալուրնի, Հէյնէի, Հիւգօյի բանաստեղծութիւնը չէ կարող պահանջուած կատարելութեամբն արտայայտել: Բայց խօսմ Բալուրնի »Երբայական մեղե-

դիբը՝ իրանց բովանդակութեամբ խորթ չեն մեր կեանքին. խօս գրանք կարող են ոտքով ու գլխով մեր անցեալին, մեր մտքին ու սրտին վերագրուիլ: Եւ մեր լեզուն է՛ իբրև այդ կեանքի, այդ մտքի ու սրտի թարգման՝ կարող է հրաշալի կերպով անօթ դառնալ այդ մեղեդիներում երգուած վշտի, պահպանելով բնագրի ոյժն ու ճշտութիւնը: Բայց պ. Ծատուրեանը նոյն իսկ այդտեղ երևան է հանում մի անհասկանալի, մինչ իսկ դատապարտելի անհոգութիւն: Բերենք մի օրինակ ու գրանով էլ բաւականանա՛նք. որովհետև մեր յօդուածըն արդէն շատ երկարացաւ:

Բայւրնի երկերը ռուսերէն լոյս են տեսել մի քանի թարգմանութեամբ. ես վերցնում եմ «Живописное обозрѣніе» թերթի հրատարակութիւնը: Դա արձակ թարգմանութիւն է և գրեթէ, որպէս առիթ եմ ունեցել համոզուելու, բառացի թարգմանութիւն, ուրեմն և մտքի կողմից ճիշտ: Ահա մի ոտանաւոր.

У береговъ Иордана бродить верблюды араба, на холмахъ Сіона служатъ жрецы лжебога, въ скалахъ Сина преклоняется почитатель Ваала но даже тамъ, тамъ, о, Боже! молчитъ твой громъ!

Աւստիկ այդ հատուածը պ. Ծատուրեանի թարգմանութեամբ.

„Սրբանուէր այս ավերում, ուր հոսում է Յորդանան,

Այժմ, աւանդ, արարների թափառում է կարաւան. եւ քո Սինա լեռան վերայ փառք է երգում Բաալին (Բահաղին?)

Աստուած ինչո՞ւ կայծակներով դու չես շանթում չարերին:

Ստանաւորը ռուսերէնում այսպէս է վերջանում.

Пусть око твое блеснетъ въ молніи, пусть выпадетъ копьё изъ дрожащей рубли покорителя! Долго-ли нога тирана будетъ попирать твою землю? Долго ли, о, Господи! храму твоему оставаться въ запустѣніи?

Ահա և պ. Ծատուրեանի թարգմանութիւնը.

Աչքդ՝ փայլակ, ձայնդ՝ որոտ, սիլ Դու անյաղթ
Տէր մարդկան,

Արդեօք բախտը շնու կժպտայ Ի սրայելի աւերտան...
Եւ դեռ երկնը նորան պէտք է բռնաւորներ հայ-
հոյն

Ու անարգեն և օրէնքդ, և տաճարդ սրբաշէն:

Թողնենք, որ ռսերէն արձակ թարգմանութիւնն
անհամեմատ աւելի ուժեղ է և ազգու, բայց հէնց սոսկ
մտքի կողմից տեսէք ի՞նչ սարեր ու ձորեր կան դրանց
մէջ:

Այդպէս անճիշտ և թույլ են պ. Ծատուրեանի բո-
լոր թարգմանութիւնները:

Խանքէնդ.

Յ. ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆ

